ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 հունիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

85
(2751)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ «ՎԱԽԵՐԸ» ՈՉ ՈՔԻ ՉԵՆ ՎՍՏԱՀՈՒՄ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նախագահ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպումներն իսկական փորձություն եւ գլխացավանք են «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների համար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ամեն անգամ, երբ իշխող ֆրակցիայի պատգամավորները հանդիպում են Նիկոլ Փաշինյանի հետ, նիստ են անում, վարչապետի անվտանգության աշխատակիցները պահանջում են, որ պատգամավորների հեռախոսները եւ «խելացի» ժամացույցները հավաքվեն:

Հավանաբար, Փաշինյանն այնքան է երկյուղում, որ անգամ չի վստահում իր թիմակիցներին:

«Ժողովուրդ» օրաթերթի այս լուրը հաստատեց նաեւ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը՝ պարզաբանելով. «Այո՛, նիստերից առաջ պատգամավորների հեռախոսները հավաքում են: Եթե ժամացույց ասելով՝ նկատի ունեք «խելացի» ժամացույցները, այո՛, դրանք էլ են հավաքում»: Աղազարյանը բացատրեց, որ ԱԺ պատգամավորներից հեռախոսները հավաքելու պատճառն այն է, որ «նրանք չշեղվեն, կենտրոնանան նիստում քննարկվող հարցերին եւ «Տիկ-Տոկ» չմտնեն»: Փաստորեն, ՔՊ-ականները, ըստ ՔՊ խմբակցության պատգամավորի, «Տիկ-Տոկ» ժամանցային հարթակի սիրահարներ են ու անգամ վարչապետի հետ հանդիպումների ժամանակ են մտնում: Իսկ իրականում պարզ է, որ, բացի «Տիկ-Տոկ»-ից, Նիկոլ Փաշինյանը չի վստահում սեփական թիմին, եւ իշխանական պատգամավորները ստուգվում են հանդիպումներից առաջ ոտքից-գլուխ:

Նախկին իշխանությունների դեմ կատաղի պայքար ծավալող, ապօրինի ծագման գույքի վերադարձի համար իրավական պրոցեսներ տանող ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը իր թիմը համալրում է նախկիններ ի ընտանիքների անդամներով: Հունիսի 12-ին հայտնի դարձավ, որ Երեւան քաղաքի դատախազ Լիլիթ Գրիգորյանը նշանակվել է գլխավոր դատախազի տեղակալ: Նա համակարգում նոր չէ, երկար տարիներ աշխատել է Երեւան քաղաքի դատախազի տեղակալ, որից հետո նշանակվեց Երեւան քաղաքի դատախազ, իսկ, ահա, հիմա էլ գլխավոր դատախազի տեղակալն է: Տեղեկացանք, որ դատախազի տեղակալ Գրիգորյանի ամուսինը Գեւորգ Մարգարյանն է, որը եղել է ՀՀ նախկին զինվորական դատախազ, եւ, ըստ լուրերի, ՀՀ նախկին վարչապետ Վազգեն Սարգսյանի հետ կոնֆլիկտի արդյունքում հեռացրել են նրան համակարգից: Մարգարյանը ազատումից հետո հանդիպել էր լրագրողների հետ եւ հայտարարել. «Վահան Խորխոռունու սպանության տաք հետքերով բացահայտմանը խոչընդոտել է գլխավոր դատախազի տեղակալներից մեկը» (ի դեպ, «Առավոտին» տրված հարցազրույցում): Նա նշել էր տեղակալի անունը՝ Գագիկ Ջհանգիրյան: Այդ հայտարարությունն այդպես էլ իրավական ընթացք չունեցավ, միայն հայտնի է, որ Գեւորգ Մարգարյանն իր պաշտոնանկությունից հետո հանդիպել էր ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ, սակայն հանդիպման նպատակի եւ զրույցի մասին մինչ օրս չի հանրայնացել ոչինչ:

2020 թվականի պատերազմի ավարտից հետո մի խումբ քաղաքացիներ, վրդովված ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նոյեմբերի 9-ի հրադադարի մասին հայտարարությունից, գիշերը Երեւանում զանգվածային անկարգություններ կատարեցին: ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում այս դեպքերի մասով բազմաթիվ քրեական վարույթներ կան, որոնցով նախաքննական մարմինը առաջիկայում որոշումներ է կայացնելու: «Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ շատ վարույթներ կկարճվեն, քանի որ 3 տարի անց նախաքննական մարմինը հիմնավոր ապացույցներ չգտավ մեղադրյալների մասով, որ գործը ուղարկի դատարան: Հիշեցնենք, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ի գիշերը, երբ հայտնի դարձավ ղարաբաղյան պատերազմում հայկական կողմի պարտության եւ հրադադարի եռակողմ հայտարարության ստորագրման մասին, Երեւանում անկարգություններ սկսվեցին, հարձակման ենթարկվեցին Ազգային ժողովի, կառավարության շենքերը: Այս գործով որոշ քաղաքացիներ ազատազրկման դատապարտվեցին, իսկ շատերի մասով ԱԱԾ-ում քննությունը շարունակվում է, եւ նախաքննական մարմինը նրանց մեծ մասի մասով գործը կկարճի, քանի որ ապացույցները բավականին թույլ են. խմբով ծեծել են, բայց կոնկրետ ով՝ պարզել չի հաջողվում:

2022-ին ՀՀ-ում կառուցվել, վերանորոգվել, հիմնանորոգվել է 531 կմ ճանապարհ: Այս մասին խորհրդարանում հայտարարել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը այս տարի՝2022 թվականի պետական բյուջեի նախագծի կատարողականի քննարկման ժամանակ: Այս ցուցանիշը զիջում է 2021 թվականին արձանագրված ցուցանիշին: «Եթե ընդհանուր պատկերը տանք հիմնանորոգումների, միջին նորոգումների այլ նշանակության ճանապարհների մասով, ապա պատկերը հետեւյալն է. ընթացիկ տարում 572 կմ ճանապարհ է կառուցվել, որը բավական լավ ցուցանիշ է: Մյուս կողմից՝ եթե մենք միավորենք սուբվենցիոն ծրագրերով իրականացրած աշխատանքները (այնտեղ նույնպես ունենք ասֆալտապատման եւ սալիկապատման գործընթաց), ապա բոլորը միասին կունենանք 750 կմ»,-ասել էր Գնել Սանոսյանը 2021 թվականի դեկտեմբերի 30 -ի կառավարության նիստի ժամակակ: Նկատենք, որ 2018-ի ապրիլին տեղի ունեցած հեղափոխությունից հետո իշխանությունները մշտապես խոսում էին ճանապարհաշինական աշխատանքների մասին եւ հայտարարում, թե Հայաստանն իր պատմության մեջ այսքան ճանապարհ չի նորոգել: Անգամ իրենց խոստումներն ու աշխատանքի շարունակականություն չեն կարողանում ապահովել: Տեսնում ենք, որ, նախորդ տարվա համեմատ, թվի նվազում ունենք:

ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ

ՊՐՈՌԵԿՏՈՐԸ՝ ՍԿԱՆԴԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Լուսինե Ստեփանյանի հետ՝ մի քանի հարց պարզաբանելու համար:

-Տիկին Ստեփանյան, ճի՞շտ է, որ Դուք նախկին ռեկտորի հետ Սանկտ Պետերբուրգում մասնակցել եք միջազգային կոնֆերանսի եւ վերադառնալուց հետո եք իմացել ռեկտորի դեմ հայտարարված քրեական հետապնդման մասին:

-Մենք մեկնել ենք միջազգային գիտական կոնգրեսին, որը միավորել է ֆիզկուլտուրայի բուհերի ներկայացուցիչներին ապրիլի 25-29-ը, որտեղ պարոն Խիթարյանը հրավիրված է եղել որպես զեկուցող, ես հրավիրված եմ եղել որպես նստաշրջանի վարող՝ համանախագահող եւ գիտական զեկուցող: Հրավերը եղել է պաշտոնական, եւ հրավիրող կողմը հոգացել է ֆինանսական ծախսերի մի մասը: Մեկնելուց առաջ եւ ընթացքում ընդհանրապես ոչ մի տեղեկություն չենք ունեցել քրեական գործի վերաբերյալ: Խոսեմ իմ անունից. ես քրեական գործի մասին տեղեկացել եմ ամսի 2-ին, քանի որ վերադարձել ենք ամսի 29-ին, եղել է շաբաթ օր, մայիսի 1-ը աշխատանքային չի եղել: Ամսի 2-ին եկել ենք աշխատանքի, եւ եթե չեմ սխալվում, հենց «Ժողովուրդ» օրաթերթում էր գրված, որ դիմել են հստակեցնելու՝կա արդյոք գործ, թե չկա: Մինչեւ օրվա վերջ տեղեկացել ենք, որ կա քրեական գործ:

-Իսկ այն տեղեկությունը, որ նախկին ռեկտորը, արդեն զրկված լինելով իր լիազորություններից, օրենքի խախտումով վարել է ձեր բուհի գիտական խորհրդի նիստը, եւ այդ նիստի ընթացքում դիմել է մանիպուլյացիայի՝ Ձեզ ներկայացնելով որպես ռեկտորի պարտականությունները կատարողի միակ թեկնածու, որպեսզի հատկապես Դուք ընտրվեք ռեկտորի պարտականությունները կատարող, համապատասխանում է իրականությանը:

-Տեղեկությունը մի փոքր խեղաթյուրված է: Երբ պարոն Խիթարյանի լիազորությունները կասեցվել են, ինքը, չարաշահելով պաշտոնական լիազորությունները, Գիտխորհուրդ չի հրավիրել. հրավիրվել է Գիտխորհրդի անդամ դասախոսական կազմը, եւ պարոն Խիթարյանը հայտարարել է, որ իր լիազորությունները դադարեցվում են, եւ այսօր կամ վաղը կլինի հոգաբարձուների խորհրդի նիստ, որտեղ կորոշվի, թե ով է լինելու ռեկտորի պարտականությունները կատարող, մինչեւ լուծում կտրվի այդ հարցին:

-Այսինքն՝դա Գիտական խորհրդի նիստ չէ՞ր համարվում:

-Ոչ, դա Գիտական խորհրդի նիստ չի համարվում: Պարոն Խիթարյանը այդ հայտարարությունը անելուց հետո Գիտխորհրդի դահլիճից դուրս է եկել, եւ Գիտխորհրդի ամենամեծ անդամներից մեկը առաջարկություն է արել, որ իրեն տան Գիտխորհրդի կարգավիճակ, եւ հրավիրել են Գիտխորհրդի արձանագրությունները կազմող քարտուղարին, արդեն՝ առանց պարոն Խիթարյանի, որպեսզի բուհը իր առաջարկությունները ներկայացնի հոգաբարձուների խորհրդին, թե ում են տեսնում որպես լիազորությունները իրականացնող այնքան ժամանակ, մինչեւ կկարգավորվի այդ պրոցեսը:

-Դո՞ւք էիք շարունակելու պաշտոնավարել, այդպե՞ս էր որոշված Խիթարյանի կողմից:

-Խիթարյանի կողմից ոչինչ որոշված չէր: Առաջարկությունը եղել է Գիտխորհրդի ամենաավագ անդամներից մեկի կողմից, անգամ կարող եմ անուն նշել. առաջարկել է իմ թեկնածությունը՝հիմնավորելով, որ բուհի գործող 3 պրոռեկտորից միայն իմ թեկնածությունն է համապատասխանում ռեկտորի պարտականությունները կատարողին: Առաջին ու ամենակարեւոր գործոնը իմ ընտրության եղել է դա: Երկրորդ՝ ոչ պակաս կարեւոր գործոնը եղել է այն, որ բուհի մեծ մասը՝ուսումնագիտականը, գտնվում է իմ վերահսկողության ներքո, եւ ես եմ վերահսկում բոլոր բաժինները, եւ այս տարիների ընթացքում տեսանելի առաջընթաց է գրանցվել, առաջ է եկել վստահություն իմ՝ որպես ուսումնագիտական գծով պրոռեկտորի շուրջ: Գիտխորհուրդը (24 հոգի էին այդ օրը ներկա եղել), այդ թվում՝ Նուշիկյանը, քվեարկել են իմ օգտին:

-Իսկ այն տեղեկությունը, որ ռեկտորի պարտականությունները մյուս պրոռեկտորի վրա դնելուց հետո Ձեր ամուսինը եւ Ձեր եղբայրը «հաշիվ են պահանջել» նախկին ռեկտորից «խոստումը չկատարելու համար», համապատասխանո՞ւմ է իրականությանը:

-Տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը: Այսքան տարիների ընթացքում ո՛չ ամուսինս, ո՛չ եղբայրս, ո՛չ տղաներս եւ, առհասարակ, ոչ մեկ չի խառնվել իմ աշխատանքին, եւ վերջապես իմ հարցը չի եղել, կամ այնպիսի հարց չի եղել, որին ինչ-որ մեկը պիտի խառնվեր:

-Եվ վերջին հարցը՝ ճի՞շտ է, որ Ձեր ամուսնուն հեռացրել են աշխատանքից կոռուպցիոն սխեմաների մասնակցելու համար:

-Ոչ, ինֆորմացիան սխալ է: Եկե՛ք ես այդ հարցին չպատասխանեմ, քանի որ ամուսնուս գործունեությունը կապ չունի իմի հետ:

Զրուցեց ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ՀՐԱՏԱՊ

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԺՎԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ Է ԱՊՐՈՒՄ»

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «ՀՀ ԱԺ Հայաստան-Արգենտինա բարեկամական խմբի կազմով օրերս խորհրդարանում հանդիպում ենք ունեցել Արգենտինայի Սենատի եւ Պատգամավորների պալատի անդամներից բաղկացած խորհրդարանական պատվիրակության հետ:

Խոսել ենք Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ադրբեջանական ոտնձգությունների, Արցախի լիակատար շրջափակման հետեւանքով ստեղծված հումանիտար խնդիրների մասին:

Հանդիպման ընթացքում ընդգծել ենք, որ Ադրբեջանն անտեսում է միջազգային հանրության եւ միջազգային կազմակերպությունների պահանջներն ու հորդորները:

Արգենտինայի Սենատի Արգենտինա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ Գիժերմո Անդրադան իր հերթին նշել է, որ Հայաստանը դժվար ժամանակներ է ապրում, եւ իրենք առկա իրավիճակի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվությունը կներկայացնեն իրենց երկրին ու միջազգային հանրությանը:

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՏՐԵՏՈՒՔՈՒՄ

«Տրետուքում վիճակը նորմալ է, կրակոցները գյուղում չեն լսվել»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց Տրետուքի համայնքապետի քարտուղարը:

«Մեզ մոտ կյանքն իր բնականոն հունով գնում է, արդեն սովորել ենք կրակոցների ձայներին»,-հակիրճ նշեց մեր զրուցակիցը:

Նշենք, որ հունիսի 13-ին՝ ժամը 11:30-11:45-ը, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից կրակ են բացել Տրետուքի եւ Սոթքի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ: Սոթքի հատվածում Ադրբեջանի ԶՈՒ-ն կիրառել է նաեւ ականանետ:

ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնում են, որ հայկական կողմում տուժածներ չկան:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՐՍՏԱՆԱԼ

Նիկոլ Փաշինյանի թիմակիցները շարունակում են հարստանալ: Նախկինում տան ու մեքենայի անհասանելի երազանք ունեցողները տուն ու ավտոմեքենա են գնում: ՔՊ խմբկցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, օրինակ, 2018 թվականին է տուն գնել, իսկ այս տարի ներկայացրած նրա հայտարարագրից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը 2022 թվականին 2017 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենա է գնել:

Կոնջորյանի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրից տեղեկացանք, որ նա մեքենան գնել է 2022 թվականի հոկտեմբերի 31-ին 9 մլն դրամով: Մինչ այդ պատգամավորն ուներ Hyundai մակնիշի ավտոմեքենա, որը հոկտեմբերի 1-ին վաճառել է 3 մլն դրամով: Հետաքրքիր է, որ Հայկ Կոնջորյանի միակ եկամուտը, ըստ հայտարարագրի, նրա պատգամավորական աշխատավարձն է, որը տարեկան կազմել է 7 մլն 868 հազար դրամ:

ԱԼԻԵՎԸ՝ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ

«Զանգեզուրի միջանցքի բացումն անխուսափելի է». այսպիսի հայտարարությամբ է հանդես եկել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ բանակցություններից հետո:

Ադրբեջանական լրատվամիջոցները գրում են, որ քննարկել են Զանգեզուրի միջանցքի շուտափույթ բացման հարցը: «Դա անխուսափելի է, եւ որքան շուտ, այնքան լավ: Մենք կավելացնենք մեր ջանքերն այս հարցում: Այդ «միջանցքի» (չակերտները՝Tert.am) բացումը հնարավորություններ կստեղծի բոլոր երկրների համար»,- ասել է Ալիեւը:

Նա նաեւ հավելել է, որ միջազգային իրավունքը «չի գործում». այսօր աշխարհում առաջին պլան է մղվում «ուժի» գործոնը:

ՆԻԿՈԼՅԱՆԸ ԱՇԽԱՏՈՒՄ Է, ԹԵ՞ ՈՉ

Հանրային հեռուստաընկերության գլխավոր ոճաբան, դիզայներ Արամ Նիկոլյանը, իր դիմումի համաձայն, ազատվել է աշխատանքից: Այս մասին մայիսի 31-ին Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում ասել էր Հանրային հեռուստաընկերության տնօրեն Հովհաննես Մովսիսյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Արամ Նիկոլյանի հետ, որը, մեզ հետ զրույցում անդրադառնալով իր՝ աշխատանքից ազատմանը, ասաց. «Ես արդեն ասել եմ, որ մի որոշ ժամանակ անցնելու դեպքում ես Ձեր բոլոր հարցերին կպատասխանեմ: Ամենայն հավանականությամբ ասուլիս կլինի»:

Իսկ ինչ վերաբերում է Հանրային հեռուստաընկերությունից աշխատանքից ազատվելու հարցին, Արամ Նիկոլյանը մեզ հետ զրույցում ասաց, որ ճիշտ չէ:

Մեր ճշտող հարցին,այսինքն՝ ճիշտ չէ, որ Հանրային հեռուստաընկերությունից ազատվել է, նա նշել է. «Ճիշտ չէ. ավել ոչինչ ասել չեմ կարող այս պահին»:

Հիշեցնենք, որ ապրիլի 14-ին Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում Ծանրամարտի Եվրոպայի առաջնության բացման արարողության ժամանակ դիզայներ Արամ Նիկոլյանն այրեց Ադրբեջանի դրոշը:

Անուհետեւ հայտնի դարձավ, որ հենց նա է հեղինակել եւ կարել Ծանրամարտի Եվրոպայի առաջնության բացման արարողությանը ներկա բոլոր երկրների, այդ թվում՝ Ադրբեջանի ներկայացուցիչների զգեստները:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿՈՉ

ՀԱՊԸՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀՅԴ-ԻՑ

ՀՅԴ Հայաստանի գերագույն ժողովը ճակատագրական այս հանգրվանում համահայկական զորաշարժի կոչ է հնչեցնում: Այս մասին ասված է ՀՅԴ Հայաստանի կազմակերպության 26-րդ գերագույն ժողովի տարածած հայտարարությունում:

Հայտարարությունը ներկայացնում ենք ստորեւ.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

հայ ժողովուրդը եւ հայոց պետականությունը կանգնած են գոյութենական ծանրագույն սպառնալիքի առջեւ:

Հայաստանի իշխանությունների որդեգրած ապազգային քաղաքականությունը՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ուրացումը, ՀՀ անկախության հռչակագրից բխող հանձնառություններից եւ Արցախի Հանրապետության անվտանգության երաշխավորի սահմանադրական պարտականություններից հրաժարվելը, թուրք-ադրբեջանական պարտադրվող զիջումներն ընդունելու եւ հայ ժողովրդի ազգային պետական շահերը ստորադասելու քաղաքականությունը կործանարար է: Ադրբեջանի շարունակվող ագրեսիան հանգեցնելու է նոր ցեղասպանության եւ Արցախի հայաթափման, հարցականի տակ է դնելու Հայաստանի պետականության ապագան:

Հայ ժողովրդի թիկունքում հակասահմանադրական ընթացքով ձեռք բերված ցանկացած պայմանավորվածություն կամ փաստաթուղթ չունի իրավական եւ քաղաքական լեգիտիմություն, այն հղի է նոր պատերազմի սպառնալիքով եւ անխուսափելիորեն ապակայունացնելու եւ նոր ցնցումների է տանելու ողջ տարածաշրջանը:

Հակասահմանադրական եւ հակապետական այս ընթացքի անհապաղ կասեցումը օրախնդիր է եւ համազգային առաքելություն:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն ժողովը ճակատագրական այս հանգրվանում ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՇԱՐԺԻ կոչ է հնչեցնում:

Սթափվելու, ընդվզելու, մեր ՊԵՏՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՎ ՏԵՐ ԿԱՆԳՆԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆ ՊԱՀՆ է:

ԱՐՑԱԽԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍԱԿԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ Չէ

Մենք համոզված ենք՝ իշխանությունների կողմից պարտադրված պարտվողականությանն ու անզորությանն այլընտրանք կա, հաստատում ենք՝ ներազգային համերաշխության վերահաստատումով եւ համահայկական ներուժով կարող ենք եւ պարտավոր ենք՝

- վերականգնել Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը,
- վերականգնել երկրի անվտանգային համակարգը, ազգ-բանակ համազգային գիտակցումով բարձրացնել երկրի պաշտպանունակությունն ու Հայոց բանակի մարտունակությունը,
- արդյունավետ օգտագործելով միջազգային իրավունքն ու միջազգային հարթակները, համադրելով տարածաշրջանում հետապնդվող աշխարհաքաղաքական հետաքրքրությունները, Հայաստանի ռազմավարական դաշնակիցների զորակցությունն ու դիվանագիտական ռեսուրսները՝ պաշտպանել եւ առաջ տանել Հայաստանի եւ հայ ժողովրդի ռազմավարական շահերը,
- միջազգային իրավունքի համատեքստում մերկացնել եւ դատապարտել Ադրբեջանի հանցագործություններն՝ ուղղված մարդկության եւ կոնկրետ հայ ժողովրդի դեմ,
- կասեցնել մեր ազգային ինքնությունը քայքայող օտարածին ծրագրերը, երկրում հաստատել իրական ժողովրդավարություն, հանրային համերաշխություն եւ արդարություն,
- համահայկական ուժերի մեկտեղումով զորացնել Հայաստանի կարողականությունները, ստեղծել ուժեղ եւ մրցունակ պետություն, որն անզիջում դիմադրությամբ կկանխի թուրքադրբեջանական տանդեմի հետապնդած Արցախի բռնակցման, հայաթափման եւ Հայաստանին կենսական զիջումներ պարտադրող պանթուրքական ծրագրերը:

Ներկբա է՝ վերը նշված մարտահրավերները դիմագրավելու եւ ստեղծված իրավիճակում հանգուցային բեկում մտցնելու նախապայմանը ազգային իշխանության ձեւավորումն է եւ նոր որակի պետության կառուցումը:

ՀՅԴ Հայաստանի կազմակերպությունն ու ՀՅ Դաշնակցության աշխարհասփյուռ կառույցն իրենց ողջ ներուժով լծվելու են Հայաստանի եւ Արցախի պաշտպանությանն ու փրկությանն ուղղված համազգային ընդվզման եւ դիմադրության ճակատի ձեւավորմանը»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ–ԲԱՅՐԱՄՈՎ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

«Իմ ենթադրությունն այն է, որ իրենք հյուր ունեին այս օրերին. արդեն բոլորդ տեղեկացաք, որ Թուրքիայի նախագահն է այցելում Ադրբեջան, հետեւաբար, իմ կարծիքով՝ Ադրբեջանի ԱԳ նախարարն այդ օրերին չէր կարող բացակայել Բաքվից»,- հունիսի 13-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արման Եղոյանը՝ անդրադառնալով նրան, որ օրերս Հայաստանի ԱԳՆ-ն հայտարարել էր, որ Ադրբեջանի խնդրանքով հետաձգվել են Վաշինգտոնում նախատեսված Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումը:

«Իմ տրամաբանական հետեւությունը դա է»,-ասաց նա:

Ինչ վերաբերում է հարցին՝ առաջիկա օրերին նոր հանդիպումը երբ կլինի, Եղոյանն ասաց. «Դա չեմ կարող ասել: Նման հարցերը օրերի կտրվածքով չեն լուծվում, շաբաթների կտրվածքով են լուծվում»:

ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆ ԸՆՏՐՎԵՑ

«Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժման խորհրդի նիստում ընտրվել է շարժման գործադիր կոմիտեն:

Աշխատանքային խմբի կողմից խորհրդին է ներկայացվել շարժման գործադիր կոմիտեի առաջին կազմի ընտրության կարգը, որը հաստատվել է միաձայն: Համաձայն կարգի՝ գործադիր կոմիտեի անդամները կարող են ընտրվել շարժման մշտական գործող մարմնի՝ խորհրդի կազմից:

Գործադիր կոմիտեն ընտրվել է հետեւյալ կազմով՝

գործադիր կոմիտեի համակարգող՝ Ռուբեն Վարդանյան,

անդամներ՝ Դավիթ Մանուկյան, Նարինե Աղաբալյան, Անդրանիկ Սարգսյան, Գարիկ Աբրահամյան եւ Հայկ Ավանեսյան:

Գործադիր կոմիտեն իրականացնելու է շարժման գործունեության ընթացիկ ղեկավարումը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ՝ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԻ ԳՈՐԾՈՎ

Նշենք, որ Խաչատուրովի նկատմամբ վարույթ նախաձեռնվեց այն բանից հետո, երբ ՀՀ գլխավոր դատախազ Անա Վարդապետյանը ԱԺ-ի հավանությունը ստացավ ՊՆ նախկին ղեկավար Սեյրան Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում սկսելու համար: Նախկին բարձրաստիճան զինվորականները մեղադրվում են 2 զորամասի տարածքների վաճառքի հետ կապված խարդախությունների համար:

Հիշեցնենք՝ փետրվարի 21-ին Գրիգորի Խաչատուրովի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքն օրինականացնելու (փողերի լվացման) համար: Նա ձերբակալվել էր:

Դատախազությունը միջնորդություն էր ներկայացրել նրան կալանավորելու համար: Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Տիգրան Դավթյանը մերժել էր միջնորդությունը: Խաչատուրովը նույն օրը դատարանի դահլիճից ազատ էր արձակվել:

Փետրվարի 24-ին ՀՀ գլխավոր դատախազությունը հատուկ վերանայման բողոք էր ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ Գրիգորի Խաչատուրովի նկատմամբ խափանման միջոց կալանքի միջնորդությունը մերժելու որոշման դեմ:

Մարտի 16-ին Վերաքննիչ դատարանը դատախազության բողոքը քննելուց հետո Գրիգորի Խաչատուրովին կալանավորելու որոշում էր կայացրել:

Սույն գործով մեղադրանք է առաջադրվել նաեւ 3-րդ բանակային կորպուսի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովի ընկերոջը՝ Էդգար Արշակյանին: Արշակյանի պաշտպան Միհրան Պողոսյանն ասել էր, որ քրեական գործում առկա 18 միլիոն դրամի գրավ վերցնելու մասը նույնպես իրականությանը չի համապատասխանում. «Գլխավոր դատախազն Ազգային ժողովում ուղղակի զբաղված էր մանիպուլյացիաներով, որովհետեւ տվյալ գույքի համար երբեւիցե 18 միլիոն դրամ գումար չի վերցվել: 2016-ի օգոստոսի 12-ին Խաչատուրովը ձեռք է բերել բնակարան Վանաձորում, այդ ժամանակ կքնվել է հիփոթեքային պայմանագիր, որի պայմաններում միայն այդ բնակարանը գրավադրելու համար Խաչատուրովին տրամադրվել է 18 միլիոն 484 հազար դրամի վարկային գիծ: Որոշ ժամանակ անց բանկը Խաչատուրովին խնդրել է ներկայացնել լրացուցիչ գրավ, նա էլ իր ընկերոջը՝ Էդգար Արշակյանին, խնդրել է լրացուցիչ գումարով օգնել, քանի որ Արշակյանն այդ տարածքը չի օգտագործել, որպես լրացուցիչ գրավ դա դրվել է բանկում, սակայն վարկային գիծը ոչ մի դրամով չի ավելացել»:

Փաստաբանը շեշտեց, որ Էդգար Արշակյանին մեղսագրվում է մի արարք, որն օբյեկտիվ իրականությունում գոյություն չունի. «Ասում են՝ Գրիգոր Խաչատուրովն է իրականում այդ տարածքը ձեռք բերել, որի համար որեւէ փաստական հիմք չկա, եւ Էդգար Արշակյանը հանդիսացել է, այսպես ասած, քողարկված անձ՝ Խաչատուրովի գործարքը թաքցնելու համար»: Եվ, ահա, հենց Էդգար Արշակյանն էլ կոտրել է ոտքը, ու նիստերը չեն կայանում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԵԼ Է ՍՊԱՆԵԼ ՀՈՐԵՂԲՈՐԸ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են 41-ամյա տղամարդու կողմից հորեղբոր նկատմամբ սպանության փորձ կատարելու դեպքի մի շարք հանգամանքներ:

2023 թվականի հունիսի 12-ին Երեւան քաղաքի 58-ամյա բնակիչը հաղորդում է ներկայացրել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 18:00-ի սահմաններում, 41-ամյա եղբորորդին Երեւան քաղաքի Աճառյան փողոցում գտնվող իր տան բակում պտուտակահանով հարվածել է իր գլխին, կրծքավանդակին եւ ձախ թեւատակին:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում վերցվել են արնանման հետքեր, դեպքի ժամանակ տուժողի հագին եղած հագուստները, հարցաքննվել են մի շարք անձինք, նշանակվել են համապատասխան փորձաքննություններ:

Վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով՝ նշված օրը՝ ժամը 18:30-ի սահմաններում, եղբորորդին՝ 41-ամյա տղամարդը, հորեղբոր տան բակում վիճաբանել է վերջինիս հետ, որի ընթացքում իր մոտ գտնվող պտուտակահանով հարվածներ է հասցրել նրա գլխին, կրծքավանդակին եւ ձախ թեւատակին՝ նախնական տվյալներով՝ փորձելով վրեժ լուծել 2007թ. հոր սպանության համար, որի կատարման համար դատապարտված է եղել ազատազրկման:

41-ամյա տղամարդը ձերբակալվել է՝ հիշյալ հանցանքը կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիման վրա:

Նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ՝ ՊԱՐԵԿՆԵՐԻՆ

Պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակի ծառայողների մասնակցությամբ տեղի է ունեցել աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր պարեկային ծառայության պետ, ոստիկանության գնդապետ Արթուր Խուդինյանը: Ներկա էին պարեկային ծառայության պետի տեղակալ, գնդապետ Արմեն Մաթեւոսյանը եւ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ռուբեն Դավթյանը:

Արթուր Խուդինյանը կարեւորեց պարեկային ծառայության տեղն ու դերը ոստիկանական համակարգում, շեշտադրեց առաջնահերթությունները, խոսեց պարեկային ծառայողի պատասխանատվության եւ բարեվարքության մասին: Պարեկային ծառայության պետը անդրադարձավ նաեւ պարեկների արտաքին տեսքին՝ խոսելով համազգեստի կրման կանոնների խստագույնս պահպանման մասին: Ընդգծելով հասարակական կարգի պահպանության եւ հանցավորության դեմ պայքարում անզիջում լինելու անհրաժեշտությունը՝ նա կարեւորեց հատկապես քաղաքացիների հետ համագործակցությունը, գրագետ հաղորդակցությունը, շփումներում բարեկիրթ լինելը:

Խոսելով իրավախախտում կատարած անձանց հետ ճիշտ փոխհարաբերությունների մասին՝ Արթուր Խուդինյանը կարեւորեց վարչական իրավախախտումների հայտնաբերման եւ արձանագրման ժամանակ քաղաքացիներին համապատասխան իրավական նորմեր պարզաբանելը:

Խորհրդակցության ավարտին Կոտայքի մարզի գումարտակի պարեկները ստացան համապատասխան հրահանգավորում եւ անցան ուժեղացված ծառայության:

Ուժեղացված ծառայության ընթացքում Կոտայքի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 293 խախտում: Հայտնաբերվել է առանց վարորդական իրավունքի վկայականի տրանսպորտային միջոց վարող 9 անձ, հաշվառման համարանիշի հետ կապված՝ 1, չամրակապված վարելու՝ 79, վարելիս ծխախոտային արտադրատեսակ օգտագործելու՝ 7 իրավախախտում: Հայտնաբերվել է նաեւ առանց ԱՊՊԱ պայմանագրի 9, տեխնիկական զննություն չանցած՝71, թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով՝ 18 մեքենա:

Նմանօրինակ հանդիպումները եւ ուժեղացված ծառայությունները պարբերական են լինելու:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆ՝ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՆԳՆ Ոստիկանության կենտրոնական բաժնում բռնություն է գործադրվել փաստաբան Կարեն Ալավերդյանի նկատմամբ:

ՄԻՊ գրասենյակից հաղորդում են՝դեպքի կապակցությամբ Պաշտպանի սեփական նախաձեռնությամբ սկսվել է քննարկման ընթացակարգ: Համապատասխան գրություններ կհասցեագրվեն ՀՀ գլխավոր դատախազություն եւ ՀՀ ներքին գործերի նախարարություն՝նշված դեպքի հանգամանքները մանրամասն եւ բազմակողմանի քննության առարկա դարձնելու պահանջով: Հարկ է ընդգծել, որ փաստաբանի պաշտպանված մասնագիտական գործունեությունը երկրում մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգի կարեւորագույն նախապայմաններից է, արդարադատության համակարգում եւ իրավունքի գերակայության ապահովման գործում այն ունի առանցքային կարեւորություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունիսի 12-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 69 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՆՈՐԻՑ ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻՆ

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արա Խլոյանի 2021 թվականի հունիսի 25-ի հրամանով՝ Արտակ Հարությունյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, նա ազատվել է ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի պետի պաշտոնից: Վերջինս դիմել է դատարան, կայացել է դատաքննություն: 2022 թվականի ապրիլի 27-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ Սարգիս Արմենակյանը վճռել է Ա. Հարությունյանի հայցը բավարարել, անվավեր ճանաչել Ա. Խլոյանի 2021 թվականի հունիսի 25-ի թիվ 258-Ա հրամանը՝«Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի պետ Ա. Հարությանյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու եւ նրան աշխատանքից ազատելու մասին, Ա. Հարությունյանին վերականգնել իր նախկին աշխատանքում, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից հօգուտ Ա. Հարությունյանի բռնագանձել միջին աշխատավարձը՝ հաշվարկը կատարելով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ 2021թ. հունիսի 25-ից մինչեւ վերջինիս իր նախկին աշխատանքում վերականգնելու օրն ընկած ամբողջ ժամանակահատվածի համար, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4000 դրամ, ինչպես նաեւ դատարանի վճռով հաշվարկվող գումարի երկու տոկոսը՝ որպես վճարման ենթակա պետական տուրքի գումարներ: Ազգային պարկի տնօրենի ԺՊ Արմեն Ղազարյանը, չսպասելով, որ անցնի մեկամսյա ժամկետը, եւ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնի, հրաման է տվել Ա. Հարությունյանին վերականգնել իր նախկին աշխատանքում: Ազգային պարկի իրավաբանը համարել է, որ դատարանի վճիռը բողոքարկելու իմաստ չկա, վերաքննիչ դատարանում հաղթելու շանս գոյություն չունի, իսկ յուրաքանչյուր օրվա համար ՊՈԱԿ-ը պետք է Ա. Հարությունյանին գումար վճարի: Արտակ Հարությունյանը կրկին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան է դիմել, այս անգամ՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռոբերտ Ալիխանյանի՝ 2023թ. մարտի 24-ի թիվ 67-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջով: 2023թ. մայիսի 18-ին դատարան է հանձնվել հայցադիմումի պատասխան: Մայիսի 19-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Նարինե Անանյանը որոշել է սույն քաղաքացիական հայցով նախնական դատական նիստ նշանակել հունիսի 15-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Նոյեմբերյանի նստավայրում: Զանգահարեցի Դիլիջանի ազգային պարկ, որպեսզի իմանամ, թե վերոհիշյալ թիվ 67-Ա հրամանը ինչ բովանդակություն ունի: Տնօրենի քարտուղարուհին պատրաստվում էր միացնել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռոբերտ Ալիխանյանի հետ, սակայն իմանալով, որ զանգահարողը լրագրող է, ասաց,որ նա զբաղված է: Հետո նորից զանգահարեցի, քարտուղարուհին ասաց, որ Ռ. Ալիխանյանը կարող է լրագրողիս հարցերին պատասխանել միայն հունիսի 19-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԱՃԻ ՏԵՄՊԻ ԴԱՆԴԱՂՈՒՄ

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր խորհուրդն ավարտել է Հայաստանի հետ «Պահուստային ծրագրի» (SBA) առաջին ամփոփիչ ստուգումը՝ երկրին տալով շուրջ 24.5 միլիոն ԱՄՆ դոլարից օգտվելու հնարավորություն:

ԱՄՀ-ի տարածած հաղորդագրության մեջ ասվում է. «Հայաստանի տնտեսական ակտիվությունը 2022 թ. -ին շատ բարձր էր, ընդ որում՝ իրական ՀՆԱ-ն 12.6 տոկոսով աճեց՝ պայմանավորված բարձր սպառմամբ եւ արտաքին պահանջարկով: Այդ աճը սնուցվում էր Ռուսաստանից արտարժույթի եւ միգրանտների մեծ ներհոսքով:

Աճի թափը պահպանվեց 2023թ.-ի առաջին եռամսյակում շինարարության, ծառայությունների եւ առեւտրին առնչվող ոլորտների ընդլայնման արդյունքում: Ընթացիկ հաշվի պակասուրդը նվազեց՝ տարվա համար կազմելով ՀՆԱ-ի 0.9 տոկոսը, ինչին նպաստեցին զբոսաշրջության բարձր եկամուտները: Աճեցին նաեւ օտարերկրյա ուղղակի ներդրումները եւ այլ ներդրումների ներհոսքերը՝ գլխավորապես արտացոլելով Ռուսաստանից կապիտալի ներհոսքերը: Համախառն պահուստերն ավելացան՝ հասնելով 4.1 միլիարդ ԱՄՆ դոլարի: Դրամը արժեւորվեց ավելի քան 20 տոկոսով 2022 թ.-ին: Գնաճային ճնշումները 2022 թ. վերջից 2023 թ.-ի սկիզբը սկսեցին մեղմանալ: Գնաճի ցուցանիշը 2023 թ. ապրիլին նվազեց՝ կազմելով 3.2 տոկոս (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ)՝ հիմնականում բազայի ազդեցությունների եւ սննդամթերքի ու տրանսպորտի գների արագ նվազման հաշվին: Սակայն բնականոն գնաճը 2023 թ.-ի ապրիլին պահպանվեց գնաճի ցուցանիշից բարձր՝ 4.3 տոկոս (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ): Գնաճային ճնշումների հիմնական աղբյուրն անվանական աշխատավարձերի երկնիշ աճը եւ ծառայությունների գների աճն էին:

Հարկաբյուջետային դիրքը 2022թ.-ին նշանակալիորեն բարելավվեց: Հարկաբյուջետային դեֆիցիտի ցուցանիշը 2022 թ.-ին նվազեց բարձր եկամուտների եւ ծախսերի թերակատարման հաշվին՝ կազմելով ՀՆԱ-ի 2.1 տոկոսը: Կենտրոնական կառավարության պարտքը նվազեց 14 տոկոսային կետով՝ կազմելով ՀՆԱ-ի 46.7 տոկոսը՝ պայմանավորված պակասուրդի նվազմամբ, բարձր անվանական աճով եւ փոխարժեքի արժեւորմամբ:

Ծրագիրն ընդհանուր առմամբ նախատեսված հունով է ընթանում: Դեկտեմբերի վերջի դրությամբ բոլոր քանակական կատարողականի չափորոշիչները (ՔԿՉ) եւ կողմնորոշիչ թիրախները (ԿԹ) կատարվել են, եւ լավ առաջընթաց է գրանցվել կառուցվածքային հենանիշերի (ԿՀ) կատարման ուղղությամբ: Մարտի վերջի կատարողական հենանիշը, որը պահանջում էր Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի (ԱՆԻՖ) լիազորությունների, հաշվետվությունների ներկայացման, թափանցիկության եւ կենսունակության պահանջները հստակեցնող որոշման ընդունում, կատարվել է որպես սույն ամփոփիչ ստուգման նախապայման գործողություն:

2023թ. -ի տնտեսական հեռանկարն ընդհանուր առմամբ դրական է, թեեւ նշանակալի ռիսկերը պահպանվում են: Կանխատեսվում է ՀՆԱ-ի աճի տեմպի դանդաղում, սակայն սպասվում է, որ այն 5.5 տոկոս կպահպանվի՝ ուժեղ թափի, սպառման եւ ներդրումների շնորհիվ: Ծառայությունների առեւտրի եւ դրամական փոխանցումների բնականոն հուն վերադառնալով՝ ընթացիկ հաշվի պակասուրդի ընդլայնում է սպասվում:

Գնաճն ակնկալվում է, որ մեկ տարվա ընթացքում կկայունանա ՀՀ ԿԲ թիրախի՝ 4 տոկոսի մակարդակում: Հեռանկարը ենթակա է բարձրացած ռիսկերի, որոնք բխում են արտաքին դժվարին միջավայրից, այդ թվում՝ տարածաշրջանի լարվածությունից, համաշխարհային ավելի խիստ ֆինանսական պայմաններից եւ խոշոր առեւտրային գործընկերների աճի տեմպի դանդաղումից:

Մակրոտնտեսական քաղաքականությունն անհրաժեշտ է, որ կարճաժամկետ հեռանկարում կանխի տնտեսության գերտաքացումը՝ միաժամանակ միջնաժամկետ հեռանկարում աջակցելով ներառական եւ դիակայուն աճին:

Եթե աճը եւ եկամուտները կանխատեսվածից բարձր լինեն, հարկաբյուջետային բուֆերների կառուցումն առաջնահերթ կլինի: Միեւնույն ժամանակ, եկամուտների մոբիլիզացման ջանքերն անհրաժեշտ է շարունակել, այդ թվում՝ ընդլայնելով հարկման բազան եւ պայքարելով ոչ ֆորմալության դեմ:

Դրամավարկային քաղաքականության վճռորոշ եւ նախաձեռնողական խստացմամբ հաջողվել է հասնել գնաճային ճնշումների զսպման, սակայն դրամավարկային քաղաքականությունն անհրաժեշտ է, որ պահպանի զգոնությունն ու տվյալներից կախվածությունը: Ֆինանսական հատվածի ռիսկերը, որոնք կապված են անշարժ գույքի ոլորտի հետ, պահանջում են ուշի-ուշով մոնիթորինգ՝ վերահսկողական գործիքների հզորացմամբ:

Հայաստանի երկարաժամկետ աճի ներուժի բացահայտման համար կառուցվածքային բարեփոխումների իրականացման հարցում շարունակական առաջընթացի կարիք կա, այդ թվում՝ խթանելով առեւտրային կապերը եւ բազմազանեցումը, բարձրացնելով ֆինանսների մատչելիությունը, ավարտելով կառավարման բարեփոխումները եւ բարելավելով կլիմայի փոփոխությանը դիմակայունությունը:

ԿԱՐԵՎՈՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ Է

Կառավարությունը 2023 թվականին 35 միլիարդ դրամի սուբսիդավորում է իրականացնելու գյուղատնտեսական ոլորտում: Ազգային ժողովի նիստի ժամանակ այս մասին ասաց էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը՝ արձագանքելով այն դիտարկմանը, թե գյուղացին մենակ է մնացել իր խնդիրների հետ:

«Այսինքն՝ եթե նայենք 2006-2010 թվականների ցուցանիշները, այնտեղ 4 տարվա մեջ 1 միլիարդ դրամ է եղել ընդհանուր գյուղատնտեսական աջակցությունը: Հիմա մենք խոսում ենք ամեն տարի 30 միլիարդ դրամի մասին: Ես կտրականապես համաձայն չեմ այն տեսակետի հետ, որ գյուղացիները մենակ են մնացել: Մեր ծրագրերից օգտվում են տասնյակ հազարավոր ֆերմերային տնտեսություններ: Հայաստանի գյուղատնտեսությունը հիմա կառուցվածքային փոփոխության է ենթարկվում. ավանդական գյուղատնտեսությանը փոխարինման է գալիս բարձր արտադրողականության գյուղատնտեսությունը:

Այդ փոփոխությունների ազդեցությունը վիճակագրական թվերի վրա կերեւա որոշ ժամանակ անց»,- ասաց Քերոբյանը:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ՝ ՀԱՅԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍՈՒՄ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչներն անհատ ձեռնարկատեր Հմայակ Մանուկյանին պատկանող հացի արտադրամասում իրականացրած ստուգման ընթացքում պարզել են, որ այն գործում է իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի կոպիտ խախտումներով (ք. Երեւան):

Մասնավորապես՝

- արտադրական շինությունում չի ապահովվել հոսքայնությունը՝ չբացառելով պարենային հումքի եւ սննդամթերքի, աղտոտված եւ մաքուր գույքի հանդիպական խաչաձեւ աղտոտումը,

-չի ապահովվել պաշտպանությունը կրծողների եւ միջատների ներթափանցումից, կեղտի կուտակումներից եւ բորբոսի առաջացումից,

- պատերը, մակերեւույթները պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող, չներծծող նյութերից, չեն ունեցել հարթ մակերես, հեշտությամբ չեն մաքրվել եւ ախտահանվել,

- սարքերը, բեռնարկղերը եւ դարակաշարերը պատշաճ չեն մաքրվել ու ախտահանվել: Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ հացի արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է հայտնաբերված խախտումները վերացնելու ժամկետ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 13-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

«ՎՏԲ-Հայաստան» բանկի հաճախորդներին այսուհետ հասանելի է սպառողական վարկերի հեռահար ձեւակերպման նոր ծառայությունը: Վարկ կարելի է ստանալ՝ լրացնելով օնլայն հայտ բանկի կայքում, առանց մասնաճյուղ այցելելու: Վարկի տրամադրման վերաբերյալ որոշումը կայացվում է վայրկյանների ընթացքում:

Օնլայն վարկը տրամադրվում է 1-ից մինչեւ 5 տարի ժամկետով, տարեկան 14?5%-18% տոկոսադրույքով (փաստացի տոկոսադրույք՝ 19.6%-22.7%): Վարկի նվազագույն գումարը կազմում է 100 հազ., առավելագույնը՝10 մլն ՀՀ դրամ:

Բանկի կայքում հեռահար եղանակով վարկ ստանալու համար անհրաժեշտ է ընտրել «Օնլայն վարկ» բաժինը եւ բացված էջում լրացնել անհրաժեշտ դաշտերը՝սոցիալական քարտի համար, հեռախոսահամար, վարկի ցանկալի գումար եւ ժամկետ: Վարկը հասանելի է ինչպես «ՎՏԲ-Հայաստան» բանկի գործող հաճախորդներին, այնպես էլ դեռեւս հաճախորդ չհանդիսացող ֆիզիկական անձանց. էլեկտրոնային վարկային հայտը լրացնելու ընթացքում հաճախորդները կարող են ակնթարթորեն բացել քարտ եւ դառնալ բանկի հաճախորդ:

«Սպառողական վարկերը երկրի բնակչության կողմից ամենապահանջված վարկատեսակներից են, այդ իսկ պատճառով «ՎՏԲ-Հայաստան» բանկն իր թվայնացման շրջանակներում որոշել է մեկնարկել վերջիններիս օնլայն ձեւակերպումը: Մեր պրոդուկտների շարքում այս նոր ծառայությունը թույլ է տալիս հաշված րոպեների ընթացքում անցնել վարկավորման գործընթացն առանց տանից դուրս գալու: Միաժամանակ մենք հոգացել ենք, որ սմարթֆոնից կամ համակարգչից վարկային հայտի լրացման գործընթացը հնարավորինս պարզ ու հասկանալի լինի օգտատերերի համար»,- նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Սպառողական վարկի հեռահար տրամադրման բոլոր փուլերում անվտանգության պահանջների պահպանման նպատակով կիրառվում է հաճախորդի կենսաչափական նույնականացում, ինչպես նաեւ նույնականացում SMS-ի եւ էլ. փոստի միջոցով:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԲՈՂՈՔՈՒՄ ԵՆ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը խաղողագործներից ահազանգեր է ստանում այն մասին, որ մթերող ընկերություններն իրենց հետ պայմանագրեր են կնքում՝ շատ մատչելի գներ առաջարկելով, ինչով պայմանավորված՝ իրենք հայտնվել են անելանելի վիճակում: Խաղողագործներից շատերը ստիպված կամ հրաժարվում են պայմանագիր կնքելուց, կամ էլ շատ մատչելի գնով համաձայնում են իրենց մթերքը «հանձնել» տարբեր ընկերությունների: Ըստ մեր զրուցակիցների՝ եթե այսպես շարունակվի, ապա իրենք կտուժեն ու կհայտնվեն շատ դժվար իրավիճակում: «Ժողովուրդ» օրաթերթն այս առնչությամբ զրուցել է ՀՀ գինեգործների միության նախագահ Ավագ Հարությունյանի հետ, որը մեզ հետ զրույցում նշեց, որ այս խնդիրը հայկական շուկայում միշտ է եղել, եւ այստեղ ոչ արտադրողը եւ ոչ էլ մթերողը մեղավոր չեն. այս հարցը պետք է ՀՀ կառավարությունը լուծի:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ԱՊՀ եւ ԵԱՏՄ անդամ պետությունների երկրորդ երիտասարդական համաժողովին:

Ֆորումին մասնակցել են ԱՊՀ եւ ԵԱՏՄ անդամակցող երկրների ավելի քան 150 պատվիրակներ Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ռուսաստանից, Տաջիկստանից, Ուզբեկստանից, Կուբայից, ինչպես նաեւ ԱՊՀ այլ պետություններից: Ֆորումն անցկացվել է ՌԴ Սոչի քաղաքում:

Միջոցառման բացման արարողությանը ներկա է եղել եւ ողջույնի խոսքով հանդես է եկել ՌԴ վարչապետ Միխաիլ Միշուստինը: ՌԴ վարչապետն անդրադարձել է եվրասիական ինտեգրացման շրջանակում այժմ գործող երիտասարդների համար նախատեսված ծրագրերին: Մասնակիցներին ողջունել են ԱՊՀ գլխավոր քարտուղար Ս. Լեբեդեւը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Մ. Մյասնիկովիչը, ֆորումին մասնակից երկրների պատվիրակությունների ղեկավարները:

Բացման արարողությանը ելույթով հանդես է եկել նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը՝ անդրադառնալով երիտասարդներին մասնակցությանը ժամանակակից տնտեսական խնդիրների լուծմանը: Խոսելով ֆորումի հիմնական թեմայի՝ երիտասարդական ձեռներեցության եւ ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանն ուղղված աջակցության մասին՝ Ա. Մարտիրոսյանը երեք առանցքային մոտեցում է շեշտադրել:

«Առաջինն այն է, որ ձեռնարկատիրական հմտությունների եւ ձեռնարկատիրական վարքի ձեւավորումը պետք է սկսվի դպրոցից եւ շարունակվի հետագա կրթական աստիճաններում»,- նշել է նախարարի տեղակալը՝ հակիրճ ներկայացնելով հանրակրթական, միջին մասնագիտական եւ բուհական կրթական համակարգերում այդ ուղղությամբ ձեւավորված հայաստանյան փորձը:

Ըստ նախարարի տեղակալի՝ երկրորդ մոտեցումն այն է, որ անհրաժեշտ է քաջալերել երիտասարդներին ոչ միայն համալրելու աշխատաշուկան՝ որպես պատրաստված մասնագետներ, այլեւ անել հնարավորը, որպեսզի հենց նրանք դառնան գործատուներ:

Խոսելով երրորդ մոտեցման մասին՝ Ա. Մարտիրոսյանն ընդգծել է ձեռնարկատիրությունը խթանող երիտասարդական ծրագրերի մասին տեղեկատվական պորտալների գործարկման անհրաժեշտությունը, որոնք հնարավորություն կտան էլ ավելի մեծ թվով երիտասարդների հաղորդակից դարձնելու ազգային եւ վերազգային մակարդակով իրականացվող աջակցման ծրագրերին: «Այս համատեքստում ցանկանում եմ նշել, որ քանի որ ԵԱՏՄ-ն կոչված է միավորելու անդամ պետությունների տնտեսական եւ իրավական տարածությունները, ստեղծելու մարդկային կապիտալի, աշխատանքային ռեսուրսների ազատ տեղաշարժի հնարավորություններ, արդյունավետ կլինի ԵԱՏՄ եւ ԱՊՀ երկրներում ստեղծել միասնական երիտասարդական պորտալներ, որտեղ կտեղադրվեն երիտասարդական ձեռնարկատիրության խթանմանն ու երիտասարդության մասնակցության աճին ուղղված բոլոր ազգային եւ վերազգային ծրագրերը»,- ասել է նա:

Ֆորումի առանցքային իրադարձությունը լիագումար նստաշրջանն էր: Ռազմավարական քննարկումների շրջանակում մշակվել են երիտասարդական ձեռնարկատիրության եւ պետական իշխանության մարմինների կողմից ոլորտի աջակցության նախաձեռնություններ:

Ֆորումի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը եւ Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ եւ շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ Վերոնիկա Խորասանյանն այցելել են Սոչիի «Գաղափարների ծով» կենտրոն, որտեղ, ի թիվս մի շարք ծառայությունների, տարատեսակ ծրագրերի միջոցով աջակցություն է տրվում երիտասարդներին սեփական բիզնես գաղափարներն իրականություն դարձնելու համար:

ՀՀ ԿԳՄՍ ներկայացուցիչներն այցելել են նաեւ Սոչիի «Երիտասարդների տուն» երիտասարդական կենտրոն, ծանոթացել կենտրոնի հնարավորություններին, ծառայություններին, աշխատանքային մեթոդաբանությանը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՔՈԹԱՆՋՅԱՆԻ ՈՐԴԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՈՒՄ Է

Հունիսի 13-ին ՀՀ ժողովրդական արտիստ Ռաֆայել Քոթանջյանի մահվան տարելիցն էր: Այդ կապակցությամբ Քաղաքային պանթեոնում տեղի ունեցավ արտիստի հուշարձանի բացման արարողությունը: «Ժողովուրդ» օրաթերթն այս ամենի մասին զրուցել է արտիստի որդու՝ Մայքլ Քոթանջյանի հետ:

-Պարոն Քոթանջյան, կպատմե՞ք հուշարձանի մասին: Ո՞վ է հեղինակը:

-Հեղինակը շնորհալի երիտասարդ Ջամոկ Սարգսյանն է, որը տարբեր մրցույթներում գրավել է պատվավոր հորիզոնականներ: Արեցինք ամեն բան, որպեսզի համահունչ լինի Ռաֆայել Քոթանջյանին, իր կերպարին, քանի որ նա շատ լուսավոր անձնավորություն է եղել:

-Ռաֆայել Քոթանջյանի հետ կապված ի՞նչն եք ամենաշատը վերհիշում եւ կարոտում:

-Ինքը այնքան մեծ էներգիայով անձնավորություն էր, որ ամենաշատը, երեւի թե, կարոտում եմ իր էներգիան, որը քաղաքից է պակասել:

-Մահից մեկ տարի անց ի՞նչ կորցրեց հասարակությունը:

-Վառ անհատականություն, որը շատ պետքական էր մեր ժողովրդին: Շատ սրտացավ անձնավորություն էր Ռաֆայել Քոթանջյանը, եւ իր ամենամեծ ցանկությունն այն էր, որ հայ ժողովուրդը լավ լինի, լինի ուրախ եւ երջանիկ: Ցավոք սրտի, անցյալ 2 տարիների ընթացքում մենք շատ հայրենասեր մարդկանց կորցրինք:

-Ի՞նչ եք անում, որ հանրությունը հիշի իրեն եւ իր աշխատանքը:

-Ինքը հեռատես անձնավորություն էր, եւ իրենից հետո ինձ մոտ կան բավականաչափ ինֆորմացիա եւ արխիվային նյութեր, որոնցով համատեղել եւ բեմադրել եմ այս նախագիծը, որը ամսի 18-ին կխաղանք կինոյի տան դահլիճում: Դա հուշերեկո է, որը, կարծում եմ, որ պիտի լինի շարունակական:

-Մտածե՞լ եք թանգարան կամ թատրոն բացելու մասին:

-Թատրոն բացելու մասին հայրս էր մտածում, եւ ունի պահպանված շատ գրառումներ, որոնք ուզում էր իրագործել, սակայն չհասցրեց:

Իսկ թանգարանն արդեն մտածել ենք: Կինոտան առաջին հարկում, Հարություն Խաչատրյանի նախաձեռնությամբ, բացվել է «Հայֆիլմ»-ի թանգարանը, եւ ամսի 18-ին այնտեղ բացվելու է Ռաֆայել Քոթանջյանի անկյունը, որտեղ կլինի իր մանիկենը եւ այն ամենը, ինչ կապված է իր հետ: Մ. Քոթանջյանը նշեց, որ հուշարձանի բացմանը ներկա են լինելու ինչպես անծանոթներ, որոնք սիրում եւ գնահատում են Ռաֆայել Քոթանջյանին, այնպես էլ ընտանիքի անդամները, ընկերները, գործընկերները եւ առաջին անգամ նաեւ թոռնիկները:

Զրուցեց ԻՆԵՍԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ

ԵԼՈՒՅԹ՝ ՋԱԶԱՅԻՆ ՀԱՄԵՐԳԻՆ

Լեւոն Մալխասյանը, Միեր Համբարձումյանը եւ Արտյոմ Լալայանը ելույթ են ունեցել Ռուսաստանի օրվան նվիրված ջազային համերգին: Հայկական ջազի աստղերը երեւանյան հանդիսատեսին են ներկայացրել հայ, ռուս եւ այլ երկրների կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունները Ռուսաստանի օրվան նվիրված երաժշտական երեկոյի ընթացքում:

Երեւանում «Դոմ Մոսկվի» մոսկովյան մշակութագործարարական կենտրոնից տեղեկացնում են, որ միջոցառումը նախաձեռնել էր «Դոմ Մոսկվի»-ն՝ Մոսկվայի կառավարության, Մոսկվա քաղաքի արտաքին տնտեսական եւ միջազգային կապերի դեպարտամենտի եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

«Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնը ակտիվ գործակցում է տարբեր ժանրերում ստեղծագործող մշակութային գործիչների եւ երաժիշտների հետ: Այս տարի լրանում է հայկական ջազի 70-ամյակը, որոշեցինք մայրաքաղաքի հանդիսատեսին նվիրել ջազ երաժշտության համերգ: Հայ կատարողները հայտնի են ամբողջ աշխարհում, այդ թվում նաեւ Ռուսաստանում, որտեղ նրանք հաճախ են ներկայանում ռուս ջազմենների հետ: Այս միջոցառումը կոչված է կրկին ցույց տալու մեր մշակույթների ընդհանրությունը»,- նշել է Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանը:

«Երեւանում «Դոմ Մոսկվի» կենտրոնի եւ նրա գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանի հետ վաղեմի ընկերներ ենք: Տարիներ շարունակ մենք սերտ գործակցում ենք: Համերգին ելույթ ունենալու հրավերին պատրաստակամորեն արձագանքեցի, քանի որ գիտեի, որ ամեն ինչ լինելու է բարձր մակարդակի վրա: Այսօրվա հանդիսատեսի համար կատարեցի Առնո Բաբաջանյանի ստեղծագործությունը, որը բարեկամության խորհրդանիշ եւ կապող օղակ է հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ: Իսկ երկրորդ կոմպոզիցիան նվիրեցի իմ հեռակա ուսուցիչ Օսկար Փիթերսոնի հիշատակին»,- ասել է ՀՀ ժողովրդական արտիստ, ջազմեն, կոմպոզիտոր եւ երաժիշտ Լեւոն Մալխասյանը:

Ըստ աղբյուրի՝ համերգին ելույթ է ունեցել նաեւ Միեր Համբարձումյանը՝ լեգենդար ծանրորդ, աշխարհի ռեկորդակիր Սերգո Համբարձումյանի որդին: Միեր Համբարձումյանի երգացանկում կան բազմաթիվ կատարումներ Ֆրենկ Սինատրայի երգացանկից: Ջազային երեկոն համընկել էր Միերի ծննդյան տարեդարձի հետ:

«Ուրախ եմ, որ հանգամանքների բերումով Ռուսաստանի օրվան նվիրված համերգը համընկավ իմ ծննդյան օրվա հետ: Ավելի քան 50 տարի ապրում եւ ստեղծագործում եմ Մոսկվայում, ուրախ եմ այստեղ լինելու համար, շատ ոգեւորեց հանդիսատեսի ջերմ ընդունելությունը», - ընդգծել է Միեր Համբարձումյանը:

Երեկոյի ընթացքում ելույթ են ունեցել ջազ տրիոն՝ կոմպոզիտոր եւ երաժիշտ Գարիկ Սարիբեկյանի գլխավորությամբ, «Ջազ հայկական ակցենտով» նախագծի հեղինակ, կոմպոզիտոր Արտյոմ Լալայանը, Նիկ Տեր-Հովհաննիսյանը (կիթառ), Արեգ Կարախանյանը (սաքսոֆոն), վոկալիստներ Սոնա Ումրոյանը եւ Արման Վարդանյանը:

Նշվում է, որ համերգին ներկա են եղել Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների, ՀՀ պետական կառույցների եւ ռուսական կազմակերպությունների ղեկավարներ եւ ներկայացուցիչներ, մշակույթի գործիչներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

ՀԱՅՏՆԻ Է «ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»-Ի ԲԱՑՄԱՆ ՕՐԸ

Երեւանի «Ոսկե ծիրան» հոբելյանական 20-րդ միջազգային կինոփառատոնն այս տարի տեղի կունենա հուլիսի 9-16-ը:

Այս տարի եւս միջազգային կինոտոնը հանրությանը կներկայացնի մրցութային կինոնկարներ աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ «Երեւանյան պրեմիերաներ» ծրագրով կցուցադրվեն ֆիլմեր ամենահեղինակավոր (Կաննի, Բեռլինի, Վենետիկի եւ այլն) կինոփառատոններից: Հայաստան կժամանեն կինոյի համաշխարհային դեմքեր, որոնք իրենց փորձն ու արվեստը կներկայացնեն կինոսերներին: «Ոսկե ծիրան»-ը այս տարի նշում է ստեղծման 20-րդ հոբելյանը: Բացի այդ, այս տարի նշվում է հայ կինոյի 100-ամյակը, եւ փառատոնն առանձնահատուկ անդրադարձ կունենա այդ երկու հոբելյաններին:

GOLDEN APRICOT

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

«ՊՐԵԳՈՄԵՇ»-Ը՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Երգչուհի Սիրուշոն իր ինստագրամյան էջում հրապարակել է տեսանյութ, որտեղ պատմում է «Պրեգոմեշը» միջազգային շուկա մտցնելու մասին:

«Սա մեր 2-րդ նորաձեւության շաբաթն է: 1-ինը Նյու Յորքում էր, իսկ հիմա մենք Փարիզում ենք եւ շատ ուրախ ենք լինել այստեղ: Մենք մեծ պահանջարկ ունեցող զարդերի բրենդ ենք Հայաստանում, եւ սա մեծ հնարավորություն է մեզ համար, որպեսզի մտնենք միջազգային շուկա», - նշել է նա:

ԱԴՐԻԱՆԱ ԼԻՄԱՅԻ ԿԵՐՊԱՐՈՒՄ

Հայազգի դիզայներ Ալեքսանդր Սիրադեկյանը շնորհավորել է բրազիլացի մոդել Ադրիանա Լիմային (որը հունիսի 12-ի տոնում էր ծննդյան 42-ամյակը)՝ հրապարակելով գեղեցկուհու լուսանկարը, որում Victoria's Secret-ի նախկին «հրեշտակը» կրում է դիզայների հեղինակած կոշիկներից: Լիման Սիրադեկյանի «Աշխարհն առանց սահմանների» հավաքածուի նմուշներից մեկով է՝ ԱՄՆ-ի դրոշի պատկերով: «Շնորհավոր ծնունդդ, իմ գեղեցի՛կ ընկեր»,-ինստագրամյան Story-ում գրել է Ալեքսանդր Սիրադեկյանը: Աշխարհահռչակ մոդելն իր էջում կիսվել է դիզայների մաղթանքով: Ռուսաստանում հայտնի դիզայներ Ալեքսանդր Սիրադեկյանը վաղուց «գրավել է» ռուսական շոու-բիզնեսի աստղերին իր ստեղծած յուրահատուկ ու թրենդային կոշիկներով. նրա հայտնի հաճախորդների թվում են Քսենիա Սոբչակը, Քրիստինա Օրբակայտեն, Լենա Լետուչյայան եւ այլք: Ալեքսանդրը «համախմբել է» նաեւ ամբողջ աշխարհին 2020 թ-ին ստեղծված իր «Աշխարհն առանց սահմանների» կոշիկների հավաքածուի շուրջ, որոնցից յուրաքանչյուրն իր վրա կրում է որեւիցե երկրի դրոշ:

ՄԱՀԱՑԵԼ Է ՀԱՅՏՆԻ ԴԵՐԱՍԱՆԸ

Ամերիկյան հայտնի դերասան Թրիթ Ուիլիամսը, որ հայտնի է «Մազեր» մյուզիքլից եւ «Էվերվուդ» սերիալից, 71 տարեկան հասակում մահացել է ավտովթարի հետեւանքով: Այս մասին հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով BBC-ն: Նշվում է, որ վթարը տեղի է ունեցել Վերմոնտում հունիսի 12-ին. արտաճանապարհային մեքենան հարվածել է դերասանի մոտոցիկլետին: Ուիլիամսին ծանր վնասվածքներով ուղղաթիռով հասցրել են հիվանդանոց, սակայն այնտեղ հասնելիս արձանագրվել է նրա մահը: Իր 50 տարվա դերասանական կարիերայի ընթացքում Թրիթ Ուիլիամսը նկարահանվել է նաեւ «Մի անգամ Ամերիկայում», «Ինչ անել Դենվերում մահվանից հետո», «Մեռած ոստիկանը» ֆիլմերում: Նա առաջադրվել է «Էմմի» մրցանակի 1996 թ.-ին լույս տեսած «Կեսգիշերային հերթափոխ» ֆիլմում կատարած դերի համար, իսկ 1980-ականներին արժանացել է երեք «Ոսկե գլոբուս» մրցանակների:

● *Հունիսի 15-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սիրային իրարանցում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ ստանալ խաղատան կազմակերպման լիցենզիա:

Արտակ Համբարձումյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Խաղատան կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է՝ «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1164-Ն որոշման համաձայն: Խաղատան կազմակերպման լիցենզիան տրամադրվում է անժամկետ: Լիցենզիան տրամադրվում է նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում (լիազոր մարմնի որոշմամբ կարող է երկարաձգվել եւս 23 աշխատանքային օրով)՝ վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտատուները խաղատան կազմակերպման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում հայտը եւ փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման:

ԷՋԸ՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ՄԻԳՐԱՑԻԱ

ՀԱՐՑ. Ապաստան հայցողների մասին տեղեկությունը գաղտնի՞ է:

Աննա Գալստյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողների հայտնած տեղեկությունները գաղտնի են: Դրանք չեն հաղորդվում իրենց երկրների իշխանություններին՝ ներառյալ դեսպանատներին, կամ որեւէ այլ անձի: Այդ տեղեկությունները այլ անձանց կարող են տրամադրվել միայն ապաստան հայցողի գրավոր համաձայնության դեպքում: Հարցազրույցի գաղտնիությունը երաշխավորված է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

«Փախստականների եւ ապաստանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապաստանի շնորհումը պետական մարմինների կողմից պետք է դիտարկվի Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների ներքո, եւ սույն օրենքի կամ ապաստանի եւ փախստականների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրական ակտերի կիրառման ընթացքում որեւէ պարագայում չպետք է ապաստան հայցողի կամ փախստականի մասին տեղեկություններ փոխանակվեն նրա քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրի իշխանությունների հետ:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական մարմնի կողմից տեղեկատվության փոխանցումը զանգվածային լրատվական միջոցներին միջնորդավորված կերպով հանգեցնում է վերը նշված օրենքի խախտմանը, ուստի նման ցանկացած հայտ մերժվում է Միգրացիոն ծառայության կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Եղանակային անբարենպաստ պայմաններ. Գեղարքունիքի մարզում պտտահողմ է եղել եւ կարկուտ տեղացել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8+13 +18 + 23
Կոտայքի լեռներ	+ 9 + 12 +18 + 22
Կոտայքի նախալեռներ	+15 + 17 +26 + 29
Գեղարքունիք	+10 + 15 +20 + 22
Լոռի	+10 + 16 +19 + 22
Տավուշ	+13 + 17 +22 + 26
Արագածոտնի լեռներ	+ 8 + 11 +18 + 21
Արագածոտնի նախալեռներ	+15 + 18 +26 + 30

Արարատ	+17 + 20 +30 + 33
Արմավիր	+16 + 19 +30 + 32
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 12 +18 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 19 +30 + 32
Սյունիքի հովիտներ	+19 + 22 +30 + 34
Սյունիքի նախալեռներ	+11 + 16 +21 + 24
Արցախ	+19 + 22 +30 + 34
Երեւան	+17 + 19 +29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*